

**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2017-18 ուստարվա ամփոփիչ ատեստավորման
հանձնաժողովների կարծիքների
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

14.07.2018թ.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը դեռևս 2014թ.-ից պարբերաբար իրականացնում է Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների հավաքագրում հատուկ հաշվետվության ձևաթղթի միջոցով, որտեղ ամրագրվում են նրանց հավաքական կարծիքները շրջանավարտների մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների, միջնորդավորված կերպով նաև անձնական նկարագրի մասին:

2018թ.-ի շրջանավարտները, ԵՊՀ որոշմամբ, ամփոփիչ ատեստավորման համար կատարել են միայն ավարտական աշխատանքներ և մասնակցել դրանց պաշտպանությանը, և այս տարի ավարտական աշխատանքների պաշտպանությունը և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգերում իրականացվել է միասին՝ մեկ հանձնաժողովով:

Շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանության որակաքանակական այն գնահատականները, որոնք այդ հաշվետվությամբ բարձրաձայնվում են ատեստավորման հանձնաժողովների կողմից, տվյալ բուհի գործունեության արդյունավետության առանցքային բաղադրիչներից են /եթե ոչ ավելին/: Այդ գնահատականները յուրովի արժևորում են բուհի ղեկավարության, սպասարկող ողջ անձնակազմի գործունեությունը, ֆակուլտետների ու մասնագիտական ամբիոնների կառավարչա-կազմակերպչական ջանքերը ուսումնառության ընթացքում, դասավանդող դասախոսների գործադրած ջանքերի «պտուղները»:

Դրանք հիմք են նաև ապագա գործատուների համար, որոնց ներկայացուցիչները շատ դեպքերում ընդգրկված են նաև համապատասխան հանձնաժողովների կազմերում և որոնք իրենց պահանջներն ունեն շուկայական տնտեսության ու կրթական համակարգի զարգացումների ներկա հայաստանյան պայմաններում:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գնահատել է ավարտական աշխատանքի թեմատիկայի համապատասխանությունը որակավորմանը և նրա տրամաբանական կառուցվածքը, գնահատել է ավարտական աշխատանքում յուրօրինակ լուծումների, նորարարական տարրերի, վերհանված խնդիրների համակողմանի ուսումնասիրման և վերլուծության առկայությունը, փորձնականորեն ստացված կամ ուսումնասիրված տվյալների հանրագումարային ներկայացման, սեփական տեսակետների վստահ պաշտպանության կարողությունների մակարդակը, ուշադրություն է դարձրել շրջանավարտների մասնագիտական գրականությունից օգտվելու և համադրելու կարողությունների, աշխատանքի ներկայացման և մասնագիտորեն գրագետ բանավոր խոսքի մակարդակին:

Ներկայացնենք հանձնաժողովների ընդհանրական գնահատականներն ու առաջարկները մասնաճյուղի կտրվածքով:

Հանձնաժողովների գրած հաշվետվությունների վերլուծության արդյունքում կարելի է կատարել հետևյալ ընդհանրական եզրակացությունը. ԵՊՀ ԻՄ-ի 2017-18 ուստարվա շրջանավարտները, ինչպես ամրագրվել է նաև նախորդ տարվա հարցումներում, ըստ էության,

ունեն մասնագիտական գիտելիքների իմացության և ըմբռնման պատշաճ մակարդակ, դրանք կիրառելու անհրաժեշտ կարողություն, կրթական և մասնագիտական միջավայրում գրագետ դասողություններ անելու հմտություններ: Նրանք ազատորեն կարողանում են հայտնել ու քննարկել իրենց կարծիքը, հիմնականում ազատորեն հաղորդակցվում են հանձնաժողովի անդամների հետ, ներկայացնում լսարանից դուրս ստացած տեղեկությունները:

Հանձնաժողովները միակարծիք էին մի հարցում. ավարտական աշխատանքների թեմաները հիմնականում համապատասխանում էին հայցվող աստիճանի որակավորմանը, հետաքրքրական էին, բոլոր աշխատանքները ունեին հստակ կառուցվածք՝ ներկայացված պահանջներին համապատասխան, շատ աշխատանքներում առկա էին ուշագրավ եզրակացություններ և առաջարկություններ: Մասնավորապես հաճելի է ուսանողների ավարտական աշխատանքների ներկայացման վերաբերյալ հանձնաժողովների արտահայտած կարծիքները: Նրանք նշել են, որ ուսանողները հիմնականում կարողանում էին ներկայացնել սեփական տեսակետները և նաև պաշտպանել դրանք, ինչը վկայում է նրանց ինքնուրույնության և ինքնավստահության մասին, կարողություններ, որոնք նրանք ձեռք են բերել ուսումնառության ընթացքում, դասախոսների քրտնաջան աշխատանքի և ինքնազարգացման արդյունքում:

Միաժամանակ հանձնաժողովներն ավելի ընդգծված են անդրադարձել նկատված որոշ թերություններին, որոնք կապված են տարբեր մասնագիտությունների ավարտական աշխատանքների պաշտպանության հետ:

Այսպես, օրինակ,

- Ֆրանսերեն լեզվի և գրականության հանձնաժողովը նշել է, որ որոշ ավարտական աշխատանքներ նկարագրական էին, բացակայում էին խորը վերլուծությունները, ցանկալի է, որ եզրակացություններում տեղ գտնեն աշխատանքի կարևոր արդյունքներն ու առաջարկությունները:
- Անգլերեն լեզվի և գրականության հանձնաժողովը նշել է, որ որոշ ուսանողներ դժվարանում էին պատասխանել թեմաների շուրջ տրված հարցերին (հարկ է նշել, որ շրջանավարտներն ավարտական աշխատանքները գրել են և պաշտպանել անգլերեն լեզվով):
- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկայի հանձնաժողովը ցանկալի է համարում ավելի շատ ուշադրություն դարձնել փորձնականորեն ստացված և ուսումնասիրված տվյալների ներկայացմանը, սեփական տեսակետները վստահ ներկայացնելու և պաշտպանելու կարողությունների զարգացմանը:

Հատկանշական և, թերևս, ավելորդ չէ ընդգծել, որ երբ որակական այս ձևակերպումները համադրում ենք ավարտական աշխատանքների ընդհանրական քանակական գնահատականների հետ, համոզվում ենք, որ դրանք վիճակագրորեն լիովին համապատասխանում են այդ տպավորություններին: Այսպես, առկա և հեռակա ուսուցման բաժնի ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցած **271** ուսանողից **80+118=198-ը (73,1%)** ստացել են **գերազանց և լավ գնահատականներ**: Երբ դիտարկում ենք առանձին մասնագիտությունների տվյալները, այստեղ ևս նկատելի է սուբյեկտիվ տպավորությունների և գնահատականների որոշակի ներդաշնակ համամասնությունը: Ավարտական աշխատանքի պաշտպանությունից բացակայում է «անբավարար» գնահատականը, իսկ «Բավարար» են գնահատվել **73 (26,9%)** շրջանավարտ, այսինքն,

չափազանց քիչ են «ոչինչ չկարողացողները»: Ի լրումն նշենք նաև, որ «բավարար» գնահատականներ չեն եղել «Կիրառական արվեստ», «Դիզայն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների ավարտական աշխատանքների պաշտպանություններում:

Անդրադառնանք նաև հանձնաժողովների առաջարկներին, որոնք ներառված են համապատասխան հանձնաժողովի հաշվետվության մեջ: Ներկայացնենք այն առաջարկությունները, որոնք կարող են ունենալ նաև ընդհանուր նշանակություն և յուրովի կրկնվում են տարբեր հաշվետվություններում:

Այստեղ «ցանկալի», «օգտակար» և «պարտադիր» են համարել.

- Շատ շփվել բնության հետ, զգալ իրական կյանքը և աշխատել մոտ կանգնել իրականությանը, նկատել իրական կյանքը և թեմաները ընտրել կենցաղում պիտանի օգտագործման համար, նաև ուշադրություն դարձնել նկարների շրջանակների վրա (դրանք չափից դուրս ճոխ էին) /**Կիրառական արվեստ, Դիզայն**/,
- Ուսումնական ծրագրերում ներառել SS ոլորտի ժամանակակից ուղղությունները՝ համադրելով մաթեմատիկական կրթությունը կիրառական ոլորտների հետ, թեմատիկայի մեջ ընդգրկել արհեստական բանականության, բլոկ-շղթաների (Blockchain), BigData-ի վերաբերյալ թեմաներ /**Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա**/,
- Վերլուծել լաբորատոր հետազոտությունների արդյունքները, դրանցից կատարել կոնկրետ ու արժեքավոր հետևություններ և գործնական առաջարկություններ, և եթե շրջանավարտներին շնորհվում է նաև ուսուցչի որակավորում, ապա անհրաժեշտ է նաև թեմաներ առաջադրել էկոդաստիարակությունից, անդրադարձ կատարել Կարմիր գրքում գրանցված կենդանիներին և բուսատեսակներին /**Էկոլոգիական քիմիա**/,
- Դասավանդման գործընթացում տեսական գիտելիքներն ավելի շատ զուգորդել պրակտիկ գիտելիքների հետ, նախատեսել նաև ԵԱՏՄ-ին անդամակցության հետ կապված թեմաներ /**Տնտեսագիտության տեսություն**/,
- Ավելի ուժեղացնել գործնական և հետազոտական տարրը, գտնել կատարված աշխատանքները ներկայացնելու կրեատիվ լուծումներ, մեծացնել վերլուծության կարողությունները, ավարտական աշխատանքների թեմատիկայում մեծացնել սերվիսին վերաբերող հարցերը /**Մերվիս**/,
- Խուսափել ծավալուն և շատ տարողունակ թեմաներից, կարևորել աշխատանքների ինքնուրույնությունն ու ստեղծագործական մոտեցումները /**Հայոց լեզու և գրականություն**/,
- Մեծացնել մասնագիտական ամբիոնի պատասխանատվությունը ավարտական աշխատանքների թեմաների ձևակերպման հարցում, ավարտական աշխատանքներում ավելացնել ուսումնասիրվող առարկայի, օբյեկտի, վարկածի նշանակությանը վերաբերող մասեր, հիմնավորել հետազոտության մեթոդների ու մեթոդիկաների ընտրությունը և դրանց համապատասխանությունը հետազոտության առարկային /**Մանկավարժություն և հոգեբանություն**/,
- Ընդլայնել համալսարանի գիտատեղեկատվական համակարգը, ուշադրություն դարձնել հեռակա ուսուցման բաժնի ուսանողների գիտակրթական մակարդակի

զարգացման վրա, ցանկալի է թեմատիկայի մեջ ներառել ուսումնասիրության և հետազոտության նոր ուղղություններ /Պատմություն/,

- Ելույթներում առավել ուշադրություն դարձնել կատարված գործնական վերլուծությանը /Անգլերեն լեզու և գրականություն/,
- Ստեղծել ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառելու և հմտությունները զարգացնելու հնարավորություններ, ելույթներում ընդգծել աշխատանքի կարևոր, հիմնական պահերը /Ֆրանսերեն լեզու և գրականություն/:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ ԵՊՀ ԻՄ–ի 2017-2018 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների գնահատմամբ, մասնաճյուղի շրջանավարտները պատշաճ մակարդակով տիրապետում են այն մասնագիտական գիտելիքներին և հմտություններին, որոնք դրված են բակալավրական կրթության առջև:

Մասնաճյուղում ուսումնառության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված առաջարկներում էական են համարվել ավարտական աշխատանքների թեմատիկայի պարբերական արդիականացումը, տարածաշրջանային հիմնախնդիրների թեմատիկային հարաճուն ուշադրությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների ավելի համարժեք օգտագործումը, երիտասարդ մասնագետի անհատականության, բարոյա-աշխարհայացքային հարցերին ավելի գործնական ուշադրությունը: Մասնավորապես, «Մերվիս» մասնագիտության հանձնաժողովի նախագահ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Մելիսյան Վեմիրի Ապրեսյանը առաջարկում է բուհի գործուղումների համար, որպես ավարտական աշխատանքի ղեկավարներ և գրախոսներ ներգրավել գործող մասնագետների:

Առանձին մասնագիտություններին վերաբերող դիտողությունների ու առաջարկությունների կողքին, այս ամենը կարող են հիմք հանդիսանալ ուսումնառության կազմակերպման տարբեր մակարդակի շահախնդիր կողմերի հետ քննարկելու և ընթացիկ ուսումնական տարվա աշխատանքները բարելավելուն ուղղված կոնկրետ միջոցառումներ մշակելու համար:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին